

ՀԱԿՈՒՔ ՊԱՐՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏ
(Հայկական հարցի միջազգայնացման 125-ամյակի առթիվ)

ՀԱԿՈՒՔ ՀԱԿՈՒՅԱՆ

Ամերիկացի երգիծաբան Մարկ Տվենն իր ստեղծագործական կյանքի գերհասուն շրջանում գրած և «պատմական» համարվող «Խորհրդավոր անձանոթը» վիպակում ասում է. «... իրենց ողջ աղքատությունը հանդերձ մարդիկ տիրում են մեկ անվիճելիորեն հզոր գենքի: Դա ծիծաղն է. ուժը, փաստարկները, փողը, համառությունը, աղերսանքները՝ այդ բոլորը կարող է անօգուտ լինել ձեզ կառավարող վիթխարի կեղծիքի դեմ կռվելիս: Հարյուրամյակներ շարունակ, ձեզ գուցե կհաջողվի փոքր-ինչ երեւել այն, փոքր-ինչ թուլացնել: Բայց խարխլել մինչև արմատները, փոշիացնել այն դուք կարող եք ծիծաղի օգնությամբ: Ծիծաղին ոչինչ չի դիմանա»¹:

Այս խոսքերով ամեն ինչ ասված է ծիծաղի մեծ վարպետների ամենագոր արվեստի մասին, վարպետներ, որոնց թվում իր ուրույն և տուանձնահատուկ տեղն ունի հայ հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանը: Ավելին, իբրև քաղաքական երգիծաբան նա հավասարը չունի համաշխարհային գրականության մեջ, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է միջազգային հարաբերություններին, մասնավորապես՝ մեծ տերությունների քաղաքականությանը Արևելյան հարցում և դրա մասը հանդիսացող Հայ դատին: Այս ասպարեզում լինելով պիոներ² Հ. Պարոնյանը մնաց անհասանելի քաղաքական երգիծանքի իրենից հետո եկած հայ խոշորագույն վարպետների՝ Երվանդ Օտյանի և Նշան Պեչիկթաշլյանի համար:

Եթե կենցաղային երգիծանքով Հ. Պարոնյանը կարող է արժանի տեղ գրավել Մոլիերի կողքին, ապա իբրև քաղաքական երգիծաբան նա բարձր է Մոլիերից: Քաղաքականությանը այնքան մոտ կանգնած գրող, ինչպես Անատոլ Գրանսը, իր «Լատինական հանճարը» գրքում, որը 1926թ. ունեցավ իր 61-րդ հրատարակությունը, Մոլիերին նվիրված գլխի 46 էջերում, արժեքավորելով մեծ ֆրանսիացու ստեղծագործությունը, բացարձակապես ոչինչ չի ասում նրա քաղաքական երգիծանքի մասին²: Իրապես, ֆրանսիական գրականագիտությունը Մոլիերին բնութագրում է իբրև իր ժամանակի «բարձրի նկարչի»³, որի տեսանկյունից գրողը ոչինչ արած չէր լինի, եթե չներկայացնեիր իր դարի մարդկանց, նրանց ծիծաղելի կողմերը՝ դրանով նկարելով իր «գարաշրջանի դիմանկարը»: Եվ Մոլիերը երգիծան-

1 М. Т в е п. Соч. в восьми томах. Т. 7, М., 1980, с. 441.

2 A. F r a n c e. Le Génie Latin. Paris, 1926, p. 117-163.

3 A. L a g a r d e. Michard Laurent. XVII siècle. Les Grands Auteurs Français du Programme. Paris, 1968, p. 194.

քի միջոցով դիմելով կատակերգութեան ժանրին, կերտեց իր դարաշրջանի մարդկանց «դիմապատկերները»: Նրա կարծիքով կատակերգութեան ժանրն ավելի դժվար է, քան ողբերգութեանը, քանզի հարկ է «նկարել բնորդից»:

Ծաղրել մարդկային բարքերը, որոնք հանդիպում են ամենուրեք աշխարհում, առանց «շոշափելու անձանց»՝ ահա Մոլիերի ստեղծագործական հիմնադրույթը⁴: Հետևաբար, բարքերի ծաղրից էլ մնում է անուղղակիորեն եզրահանգումներ անել Մոլիերի երգիծանքի քաղաքական արժեքի մասին՝ նրա երգիծանքն ընկալելով իբրև իր ապրած դարաշրջանի և ժամանակի «ուժեղներին» քննադատութիւն:

Միանգամայն այլ է Հ. Պարոնյանի պարագան. նրա քաղաքական երգիծանքը անմիջական է, չմիջնորդված, հարվածները դիպուկ են, անվրեպ ու անողոք: Մեծ տերութիւնների կայսերապաշտական քաղաքականութիւնը ծաղրելիս նա ցուցաբերում է պատմաբանի խորթափանցութիւն, լրագրողի իրազեկութիւն և արդարամիտ ու անկաշառ հրապարակախոսի անաչառութիւն:

Մեկ այլ կարևոր հանգամանք. Մոլիերի կարծիքով «բոլոր կանոնների մեծ կանոնը հաճույք պատճառելն է»: Եթե նկատի ունենանք, որ նրա սյրեսները ներկայացվում էին արքունիքում, ապա միանգամայն պարզ կդառնա դրանց սոցիալ-քաղաքական ուղղվածութիւնը: Մոլիերն իր վերջին ստեղծագործութիւնները գրել է Լյուդովիկոս XIV արքայի («Արև արքա») ճաշակի ազդեցութեամբ՝ պարային դրվագներ, երաժշտութիւն, հանգստացնող տեսարաններ: Այդ իսկ պատճառով Մոլիերին համարել են հարմարվող՝ «կոնֆորմիստ»: Ռուսոն նրան մեղադրել է հասարակութեան առջև փոքրուգիտներն մեջքը կքելու մեջ, Վոլտերը անվանել է «աշխարհի պարկեշտութիւնների օրենսդիր»: Անշուշտ, Մոլիերը բարոյախոս էր և ոչ ընդգծող, չափավորութեան կողմնակից էր, դեմ ծայրահեղութիւններին և գտնում էր, որ խելամտութիւնը հարմարվելն է, որ խելագարութիւն է «տեսնել քեզ ընդդեմ բոլորի», որ «կատարյալ խոհեմութիւնը խուսափում է ծայրահեղութիւններից»: Մինչդեռ Հ. Պարոնյանը ատում է հարմարվողականութիւնը, գործարքներ չի կնքում իր խղճի հետ, և՛ մեծ դրող է, և՛ մեծ մարդ, արդարամիտ և անկաշառ: Նա մինչև ուղնուծուծը ընդգիմախոս է և ժողովրդական մեղադրող՝ հստակ կողմնորոշմամբ ու շեշտակիութեամբ: Նրա խոսքը հակիրճ է, դիպուկ, արտակարգ սուր և անվրեպորեն խոցող: Դա վերաբերում է, հատկապես, մեծ տերութիւնների արտաքին քաղաքական նպատակների և դիվանագիտութեան քննադատութեանը:

Ինչպես հայտնի է, Մարկ Տվենը համաշխարհային քաղաքականութեան հարցերով սկսել է ղբաղվել XIX դ. 90-ական թվականներին, այսինքն իր գրական գործունեութեան վերջին շրջանում: 1895–1896 թթ. կատարած շուրջերկրյա ճանապարհորդութեան ժամանակ, երբ այցելեց Ասիա, Աֆրիկա և Ավստրալիա, երգիծաբանը ուշագրութիւնը բեռեց արևմտյան իմպերիալիզմի գաղութակալական քաղաքականութեան վրա: 1896 թ. Լոնդոնում նա գրում է. «Տերութիւնները (թագակիր կողոպտիչները) ընկել են

4 Նույն տեղում, էջ 177:

5 A. L a g a r d e. Նշվ. աշխ., էջ 208:

փառահեղ վերածննդի մեջ: Սուլթանը մորթում է հայերին, ինչպես խոզերի, և տերութունների համակեցությանը հարկ է միջամտել, բայց Ռուսաստանը իր ձեռքում է պահում բոլոր խաղաքարտերը»⁶: Այնուամենայնիվ, Մ. Տվենի հայացքները դեռևս տատանվողական են և որոշակի են դառնում իր երկրի՝ ԱՄՆ-ի ծավալապաշտական քաղաքականության ակտիվացման կապակցությամբ: «Խավարի մեջ քայլող մարդուն» հայտնի պամֆլետում Տվենն առաջարկեց ամերիկյան զրոշը փոխարինել ծովահենական գրոշով. «Թող մինչև իսկ մնա հինը, - միայն սպիտակ շերտերը մենք կներկենք սև գույնի, իսկ աստղերի փոխարեն կպատկերենք դանդ և ոսկորներ»⁷: Սակայն սա ավելի հրասպարակախոսություն է, քան երգիծանք:

Մինչդեռ Հ. Պարոնյանը մեծ տերությունների դիվանագիտությունը քննադատելիս մնում է բացառապես երգիծանքի ժանրի շրջանակներում: Ավելին, հայ մեծ երգիծաբանը հանդես է գալիս որպես քրոնիկագիր, որն օրը-օրին վերլուծում է միջազգային կյանքի իրադարձությունները կասկած Արևելյան հարցի հետ, մեկնաբանում դրանք բացարձակապես անաչառ և առողջ դիրքերից, իբրև գերարդար դատավոր, և անում է զարմանալիորեն ճիշտ, մարգարեական հետևություններ: Եվ այդ ամենն արտակարգ նուրբ, խոր, լակոնիկ և կատարելապես սրամիտ երգիծանքով: Ընդ որում, պարզապես ապշեցուցիչ է նրա իրազեկությունը պատմության, արտաքին քաղաքականության և դիվանագիտության հարցերում: Սակայն մինչ այս խնդրի քննարկումը, անդրադառնանք ընդհանուր բնույթի ևս երկու խնդիրների, որոնք վերաբերում են այդ երգիծանքի արդիական նշանակությանը և գեղարվեստական գրականության ու պատմագրության փոխհարաբերությանը: Երկու հարցերն էլ շատ կարևոր են Հ. Պարոնյանի արվեստի ուժը գնահատելիս:

Հ. Պարոնյանը մեծ տերությունների քաղաքականությունն Արևելյան հարցում քննադատել է գլխավորապես «Կամիթներ», «Հոսհոսի ձեռատետրը» և մասամբ՝ «Բաղաքական», «Նտղտում», «Լուսարարի նամակներ» ստեղծագործություններում, որոնք ամփոփված են նրա երկերի սասհատորյա ժողովածուի 4-րդ հատորում (Երևան, 1965 թ.): Այս գործերն ընդգրկում են XIX դ. 70-ական թվականների և 80-ական թվականների սկզբի իրադարձությունները կասկած 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, Սան-Ստեֆանոյի հաշտության և Բեռլինի վեհաժողովի ու դրա հետևանքների հետ: Այդ ժամանակներից անցել է 125 տարի: Սակայն այսօր էլ նշված իրադարձություններին անդրադառնալն անհրաժեշտ է, նույնիսկ պարտագիր, քանզի այդ ժամանակ միջազգայնացված Հայկական հարցը մնում է չլուծված և նույն պատճառներով, որոնք իր քաղաքական երգիծանքի ուժով բացահայտել և ձաղկել է Հ. Պարոնյանը: Ավելին, նրա դատափետած քաղաքականության հետագա խորացման արդյունքում ընդլայնվել են Հայկական հարցի շրջանակները. թուրքերի կողմից առևանգված Արևմտյան Հայաստանին ավելացվել են հայ ժողովրդի ազգային-պատմական հայրենիքից օտարված նոր տարածքներ, արևմտա-

6 М. Т в е н. Նշվ. աշխ., հ. 8, էջ 476:

7 Նույն տեղում, հ. 7, էջ 279:

Հայությունը արմատախիլ է արվել իր բնօրրանից, ենթարկվել է վայրագ ցեղասպանության և բռնագաղթի, պատմական Հայաստանի ինը տասներորդը Հայաթափված է: Մինչդեռ մեծ տերությունների քաղաքականությունը մնում է նույնը Բալկաններում և Հայկական հարցում, թեև պետք է որոշ վերապահում անել Ռուսաստանի գիրքորոշման վերաբերյալ դեպի բալկանյան սլավոնները:

Այսօր էլ, ինչպես 125 տարի առաջ մեծ տերությունները չեն ցանկանում ճանաչել Հայ ժողովրդի օրինական իրավունքն իր հափշտակված հայրենիքի նկատմամբ: Եթե ճանաչում են հայոց ցեղասպանության փաստը, ապա առանց փոխհատուցում ստանալու իրավունքի, այսինքն՝ առանց Հայ դատն արմատապես լուծելու պահանջն ընդունելու: Ավելին, պահանջում են թուրքերին վերադարձնել հայերի կողմից արյան գնով թուրքական լճից ազատագրված Արցախը՝ անտեսելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները, մասնավորապես աղբի ինքնորոշման իրավունքը, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում: Այսօր էլ մեծ տերությունների քաղաքականությունը Բալկաններում (Հարավսլավիայի նկատմամբ) և Հայկական հարցում նստատու է թուրքիզմի ամրապնդմանը և ազդեցության ոլորտի ընդլայնմանը, միայն այն տարբերությամբ, որ մեր օրերում թուրքիայի նեցուկը՝ թուրքամետ քաղաքականությունը գլխավորող տերությունը ոչ թե Մեծ Բրիտանիան է, այլ միջազգային նոր ժանդարմը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Բալկաններում այս իրողությունը հստակորեն դրսևորվեց Բոսնիայի և Հերցեգովինայի ճգնաժամի ժամանակ ու Կոսովոյի հարցում, երբ իր գլխավորած ռազմաքաղաքական դաշինքի՝ ՆԱՏՕ-ի միջոցով ԱՄՆ-ը ուղղակի ադրեսիա գործադրեց ընդդեմ սերբերի, խախտելով ՄԱԿ-ի կանոնադրությունը, չունենալով Անվտանգության խորհրդի համաձայնությունը, նա ռմբակոծեց և հրթիռակոծեց սերբերի քաղաքներն ու դյուղերը և իհարկե՝ Բելգրադը: Վարելով երկակի ստանդարտի քաղաքականություն ԱՄՆ-ը, ելնելով գերտերության իր շահերից և գլոբալ դերի խանության հասնելու նպատակով, անտեսում է միջազգային իրավունքի պահանջները՝ հակադիր մոտեցում ցուցաբերելով նույնօրինակ հարցերում: Օրինակ, անտեսելով պետությունների տարածքային ամբողջականության միջազգային-իրավական նորմը Հարավսլավիայի պարագայում, նա այն կիրառում է Արցախի հարցում, ոտնահարելով ազգի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, «անջատողականություն» (սեպարատիզմ) անվանելով արցախահայության ազդեցիկ-ազատագրական հակադաշնության սլաքարը: Ինչպես 125 տարի առաջ, այնպես էլ այսօր, արևմտյան դիվանագիտության ճիգերն ուղղված են Ռուսաստանի դեմ թուլացնելու նրա դիրքերը Բալկաններում, որտեղ նա ունի առանձնահատուկ շահեր և հնարավորություններ, քանզի Բալկաններն առավելապես բնակեցված են ռուսներին ցեղակից սլավոններով և հավատակից հույներով: Նույն ձևով զորավիգ լինելով թուրքիզմին և զրանով իրական դարձնելով պանթուրանիզմի վտանգը, ամերիկացիները փորձում են Անդրկովկասից և Հյուսիսային Կովկասից արտամղել Ռուսաստանին: Հասնելով հաղթանակի «սառը պատերազմում», նրանք ձգտում են մեկընդմիջտ ամրապնդել ԱՄՆ-ի՝

իբրև միակ գերտերության կարգավիճակը, հաստատել ամերիկյան աշխարհակարգ, ստեղծելով միաբևեռ աշխարհ՝ իրենց գերիշխանության ներքո:

Իրողությունների այս ֆոնի վրա 125 տարվա վաղեմություն ունեցող անցուզարձերի պարոնյանական վերլուծությունը և երգիծական քննադատությունը այսօր ձեռք է բերում զարմանալիորեն արդիական հնչեղություն: Ուստի ավելի քան օրինաչափ է, որ Հ. Պարոնյանը մտել է «Հայկական հարց. հանրագիտարան»-ի մեջ: Պարոնյանի երգիծանքն այս հարցում, ի գեսլ և մնացած դեպքերում, անաղարտ է, անբասիր, անխառն, անկոմպրոմիսային, քանզի իբրև իսկական գրող նա անկախ է և ոչինչ չի կաշկանդում նրա միտքն ու խոսքը: Իր գերճշմարտացիությամբ Պարոնյանի երգիծանքն անանց է, անմեռ: Ժամանակն անզոր է ծածկելու այն բոլոր շերտով կամ խունացնելու դրա ոչ միայն դրական-գեղարվեստական, այլև պատմագիտական և իմացողական նշանակությունը: Այս իմաստով Հ. Պարոնյանը եզակի է քաղաքական երգիծանքի անդաստանում և այսօր էլ կարող է չափանիշ ծառայել ժամանակակից այն գրողների համար, ինչ ազգի էլ պատկանելիս լինեն և ինչ ժանրով էլ ստեղծագործեն նրանք, ովքեր իրենց գրքերում շոշափում են ընթացիկ պատմական անցքերը: Հ. Պարոնյանն իր ուրույն տեղն ունի հայ դրականության այն երախտավորների առաջին շարքերում, ում ստեղծագործությունները հարստացրել են համաշխարհային դրականության գանձարանը և համամարդկային նշանակության արժեքներ են:

Գալով գեղարվեստական գրականության և պատմագրության ու արվեստի փոխհարաբերությունը, հարկ է ընդգծել, որ Հ. Պարոնյանի երգիծանքը կարող է հիմք ծառայել պատմական անցքերի ու փաստերի քրոնիկական կազմելու, դրանց մասնակիցների բնութագրման համար իբրև հավաստի աղբյուր: Այն, ինչը սովորաբար հատուկ է սլատմավիսլասանությանը (Հյուսիս, Սկոտ, Սենկևիչ, Բաֆֆի, Մուրացան, Դեմիրճյան և ուրիշ), պատմական սյուժեներով գրված դրամատիկական պոեմներին, թասերդությանը (Շեքսպիր, Կոռնել, Ռասին, Շիլլեր, Բերնարդ Շոու և ուրիշ), օպերային լիբրետոներին, կինոսցենարներին, պատմական անցքերի արտացոլմանը կերպարվեստում և ճարտարապետության մեջ (հաղթական կամարներ, բարձրաքանդակներ, որմնանկարներ, պատերազմական տեսարաններ, արձաններ և այլն), ասել է շեղումներ իրականից գեղագիտական կամ քաղաքական նկատառումներով, մտացածին իրագրություններ, հորինված դեմքեր ու դեպքեր, սուբյեկտիվ հոգեբանական վերլուծություններ և այլն, բացառվում են Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքի պարագայում:

Ինչպես արդեն ասվեց, նա քրոնիկագիր է, որի գրվածքների հիման վրա կարելի է կազմել իրադարձությունների տարեգրությունը, դրանց զարգացման պատկերը, տեղեկատվական միջոցների (հեռագրական դորձակալություններ և մամուլ) անդրադարձը և այլն: Ուստի Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքը մեծ տերությունների գիվանագիտության քննադատության իմաստով անհրաժեշտ է արժեքավորել այն չափանիշով, որը կիրառել է Ֆ. Էնգելսը Օնորե դը Բալզակի ռեալիստական ստեղծագործությունը դնահատելիս: «Իր «Մարդկային կատակերգություն» մեջ, գրել է Էն-

դելսը, Բալզակը «տալիս է Ֆրանսիական հասարակութայն ամենաաքանչե-
լի սեպիստական սլատմությունը, նկարագրելով բարքերը խրոնիկայի
ձևով, տարեցտարի, սկսած 1816-ից մինչև 1848 թվականը»⁸: Շարունակե-
լով իր միաքը, Էնգելսը շեշտում է, որ Բալզակի երկերից Ֆրանսիական
հասարակութայն մասին նա ավելի շատ բան է իմացել՝ մինչև իսկ տնտե-
սական մանրամասների իմաստով, «քան բոլոր մասնագետների այդ շրջա-
նի սլատմագիրները, տնտեսագետները, վիճակագիրները գրքերից միասին
վերցրած»⁹:

Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքն արժեքավորելիս լիովին կիրա-
ռելի է նաև այն վիթխարի չափանիշը, որին դիմել է Բերնարդ Շոուն Մ.
Տվենի ստեղծագործությունը գնահատելիս, ասելով, որ XIX դ. ամերիկյան
հասարակությունը հետադոտոզներին հարկ կլինի դիմել Տվենին ոչ սլա-
կաս, քան XVIII դ. Ֆրանսիական հասարակությունը ուսումնասիրողին՝
Վոլտերի ստեղծագործություններին: Մ. Տվենի ստեղծագործությունների
ուլիհատորյակի «Մարկ Տվենը և Ամերիկան» ներածական հոգվածի հեղի-
նակ Ա. Ստարցկը իրավամբ պրում է. «Ի զարգացումն Բերնարդ Շոուի
այդ մաքի, պետք է ավելացնել, որ նաև նա, ով ցանկանում է իմանալ
XX դարի ամերիկյան կյանքն ընդհուպ մինչև կենդանի արդիականութ-
յունը, Տվենի մոտ նույնպես կգտնի շատ կարևոր ու արդիական բան՝
այդպիսին է այդ մեծ ամերիկացու տալանգի խորաթափանցությունը և
ընդհանրացնող ուժը»¹⁰:

* * *

Հ. Պարոնյանը սկսում է ուշի ուշով հետևել Արևելյան հարցի զարգաց-
մանը, սկսած 1870-ական թվականների կեսերից, երբ 1875 թ. ամռանը,
սկզբում Հերցեգովինայում, ասլա Բոսնիայում բռնկում է քրիստոնյա
բնակչութայն ապստամբություն «ընդդեմ սուլթանական Թուրքիայի ֆեո-
դալական-արսոլյուտիստական և աղգային-կրոնական ճնշման»¹¹: Հ. Պա-
րոնյանի համար սլարդ էր, որ Արևելյան հարցում նոր ճգնաժամի շուրջ
ծափալվելիք դիվանագիտական թոհոբոհը չէր կարող շրջանցել նաև Հայ
դատը, որը կազմում էր այդ հարցի բաղկացուցիչ մասը, և որը մինչ այդ
չէր դարձել միջաղգային դիվանագիտութայն քննարկման առարկա: «Դի-
վանագիտական բառարան» եռահատորում Արևելյան հարցը ներկայաց-
ված է յոկ որսլես բալկանյան ժողովուրդների աղատագրման խնդիր օս-
մանյան լծից և ոչինչ չի ասվում հայերի մասին¹², թեև այդ հոդի վրա ծա-
գած ուուս-թուրքական սլատերաղմը և դրան հետևած Սան-Ստեֆանոյի
սլայմանագիրը ու Բեուլինի տրակտատը չշրջանցեցին Հայկական հարցը:
Բայց, ի սկզբանե, Հ. Պարոնյանը հույսեր չէր կսլում մեծ տերություննե-
րի հետ, քանզի ուներ իր տեսակետը քաղաքականութայն վերաբերյալ:

8 Կ. Մ ա Ր Ք ս, Ֆ. է ն դ ե լ ս. Արվեստի մասին. Երևան, 1963, էջ 9:

9 Նույն աեղում, էջ 10:

10 Մ. Դ ե Ն. Նչվ. աշխ., հ. 1, էջ 1:

11 История дипломатии, т. 2, М., 1963, с. 93.

12 Տե՛ս` Дипломатический словарь, т. 1, М., 1984, с. 220.

«Քաղաքականությունը փրկիսոփայական ասպարեղեն փախչելով սիրո ասպարեղին մեջ մտալ:

Շաբաթե մը իվեր Հասած Հեռագիրներն ուրիշ բան չեն Հայտներ, եթե ոչ Ավստրիո կայսեր Ռուսիս կայսեր Հետ պագտովիլը....

Հունաստանի թագավորը իրեն Հավասար թագավորի մը Հետ պագտովիլ կը փախագի, Հանձն առնողը թող Աթենք Հրամմե»,— կծու Հեզնանքով դրում է Հ. Պարոնյանը «Կամիթներում»¹³: Նույն ստեղծագործության մեկ այլ տեղում Հ. Պարոնյանը դրում է. «Ինչ որ ուղեն թող ըսեն, իմ կարծիքս այն է, որ քաղաքականության մեջ քաղաքավարություն չկա»¹⁴: «Ցավալի ճշմարտություն մ'է,— ասում է Հ. Պարոնյանը,— որ այս աշխարհիս մեջ մարդկություն ծառայություն մատուցողները միշտ կվնասվին ու վնաս Հասցնողները կը վարձատրվին ու կբարձրանան»¹⁵: «Այս դիվանագետ ըսվածները երբեմն իրարու անանկ նամակներ կը ղրկեն, որոնց մեջի պահանջումներով անուղղակի զիրար կը նախատեն և վերջը կ'ստորագրեն.

«Կը խնդրեմ, բարեհաճեցեք ընդունիլ իմ խորին Հարգանաց անկեղծ Հավաստիքը»¹⁶:

Այս բոլոր բնորոշումները քաղաքականությունից Հիասթափվելու արդյունք են, մաքրավելիականության քննադատություն, քանզի մեծ տերությունների քաղաքականությունն ընդհանրապես, իսկ Հայկական Հարցում մասնավորաբար, ապացուցում են, որ քաղաքականությունն ու բարոյականությունն անհամատեղելի են, ինչպես գտնում էր Մաքրավելին, մարդը կարող է կամ պետական գործիչ լինել և կամ էլ քրիստոնյա, երկուսը Համատեղելն անկարելի է¹⁷: «Նպատակն արդարացնում է միջոցը»,— Հաստատում էր Մաքրավելին: Նման Հարցադրումը Համարվել է ոչ միայն օրինաչափ, այլև անհրաժեշտ ու անխուսափելի: Ռուս նշանավոր պատմաբան Վ. Օ. Կլյուչևսկին դրել է, որ «Պետության գոյությունը Հնարավոր է սոսկ որոշակի բարոյական կարգերի և պարտավորությունների դեպքում, որոնք ճանաչվում են նրա անդամների կողմից: Այդ պարտավորություններն ու Հասկացությունները խստագույնս տարբերվում են սովորական մարդկային բարոյականության կանոններից: Արդեն այն, որ քաղաքական բարոյականությունն անվերջ ղանավանտիերպվում է ժամանակի և տեղի Համեմատ, նրան դնում է մասնավորից ցած, որը դիմացել է գրեթե միևնույն տեսքով առաջին մեկավորից մինչև Նապոլեոն III-ը կամ Բիսմարկը»¹⁸:

Ահա այս քաղաքական «բարոյականությունն» էր իշխում Հայկական Հարցի միջազգայնացման ժամանակ, այդ պատճառով էլ Հայ երգիծաբանը սարսված է գրել, որ քաղաքականության մեջ մարդասիրություն փնարելը «անմեղություն փնտրել է սատանայություն մեջ»¹⁹, որ «եթե դիվանա-

13 Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու. Հ. 4, Երևան, 1975, էջ 33:

14 Նույն տեղում, էջ 80:

15 Նույն տեղում, էջ 120:

16 Նույն տեղում, էջ 114:

17 St'ua' N. M a c h i a v e I I i. The Prince. New York. 1963, p. XXVIII-XXIX.

18 В. О. К л ю ч е в с к и й. Соч. в девяти томах. Т. 9, М., 1990, с. 296.

19 Հ. Պարոնյան. Նշվ. աշխ., էջ 226:

գլխավորությունը սիրուն կողմ մ'ունի այն ալ յուր լեզուն է ...»²⁰: «– Քաղաքակա՛ն... քաղաքական սա ունիմ,– գրում է Հ. Պարոնյանը «Կամիթներում»,– որ սա կռիվը լմննալեն վերջը դիվանագետներուն յուրաքանչյուրին մեյ մեկ մեհյան պիտի կսուուցեմ, ամենուն արձաններն այդ մեհյաններուն մեջ պիտի կանգնեմ, և դուռիս բացած անոնց երկրպագություն պիտի բնեմ: Ասոնք մեր գիտցած ու ճանչցած չաստվածներեն շատ վեր են: Աստվածներուն կենդանիներ կը գոհեին, ասոնց մարդ կը գոհենք ու հարյուր հազարներով կը գոհենք...»²¹:

Հ. Պարոնյանն այն աստիճան անկողմնակալ է մեծ անբուխությունների, այդ թվում ցարական Ռուսաստանի դիվանագիտության քննադատության հարցում, որ առաջին հայացքից կարող է թվալ, թե 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և դրան հետևած դիվանագիտական անցուղարձեղի՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի և այն վերանայած Բեռլինի տրակտատի կառուցվածքում և պաշտպանում է թուրքիայի շահերը, հանդես է գալիս Օսմանյան կայսրության մասնատման դեմ: Բայց երգիծաբանը լավ է ըմբռնում այդ անբուխությունների խաղերի իմաստը՝ չարաշահելով կայսրության քրիստոնյա հպատակների անմխիթար վիճակը և հանդես գալով իբրև նրանց իրավունքների պաշտպան, սուլթանից զիջումներ կորզել իրենց շահերի օգտին և, անշուշտ, այդ շահերի բախման պայմաններում: «Դիվանագետներ, թագավորներ, կայսրեր, ամենքը միաբերան «Քրիստոնեից վիճակին բարվոքում» է կ'ըսեն, ի վերա այսօր ամենայնի ես իմ վիճակիս մեջ բարվոքում մը չեմ կըրնար կոր տեսնիլ...

...ըսել կ'ըլլա թե կամ վիճակդ բարվոքելու պետք չունի, կա՛մ քրիստոնյա չես:

Իմ վախն ալ ան է. վիճակիս բարվոքումը իրենց ըլլա, քրիստոնեություն մը ունիլ գոնե ան մեջ չխաղա. թերևս ապագային պետք կ'ըլլա... Ռուսիո»²²:

Հեզմանքի իմաստը ավելի քան պարզ է. Ռուսաստանը կօգտագործի քրիստոնյա հպատակների (հայերի) պարագան իր ծավալուպաշտական շահերի և ոչ թե հայերին օսմանյան լծից ազատագրելու համար: Այս համոզմունքն ավելի որոշակի է դառնում, երբ Հ. Պարոնյանը ծաղրում է հապտապ կերպով ազավազված ռուսներեն բառերը սերտողներին, որոնք ակնկալում են ռուսական բանակի Կոստանդնուպոլիս մտնելը, հուսալով, «որ վաղը մյուս օր բարեկամները հոս գալու ըլլան նե քանի մը փարա վաստկին»²³: Իսկ բարեկամների գալու իմաստը նա մեկնաբանում է «Կամիթներին» այն հատվածում, որտեղ ամուսինը տեղի տալով կնոջ կշտամբանքներին, որ իր հետ նա չի զրուցում «բոլիթիկայի վրա». «Մուսկոֆը եկեր է եղեր, նորեն գացեր է եղեր, ինկլիզին առնանման ատաներուն (անգլիական նավատորմը կզգինների– Հ. Հ.) առաջին է եղեր..., Մուսկոֆն ալ նորեն պիտի մտնա եղեր» լուրերին տալիս է հետևյալ բացատրությունը. «Ճանըմ, սեպի քի տուններնիս միսաֆիր (հյուր– Հ. Հ.) եկավ

20 Նույն տեղում, էջ 267:

21 Նույն տեղում, էջ 286:

22 Նույն տեղում, էջ 266–267:

23 Նույն տեղում, էջ 286:

տե, խաճվե մը հրամցուցինք, խաճվեն խմելեն ետքը՝ դինի ալ բերեք կ'ըսե: Գինին կուտանք, խնձոր ալ բերեք կ'ըսե: Խնձոր կուտանք, կերակուր հանեցեք կ'ըսե: Կերակուր կը հանենք, կը նսալի կ'ուտե, աակե վերջը՝ սոֆորային թախըմը (սեղանի սպասքը— Ն. Ն.) ինձի տվեք կ'ըսե:

— Քա տե՛ր ողորմյա, աս ի՞նչ տեսակ միսաֆիր է. ես ըլլամ նե չեմ տար, թո՛ղ ելնե երթա:

— Ո՛չ կելնե, ո՛չ ալ կերթա, քիչ մը ատեն ձեր տան մեջ պիտի մնամ կ'ըսե:

— Ձեմ ընդունիր, մեյ մ'ալ տունս մի գար կ'ըսեմ ու հետը չեմ տեսնուիր: Աս ի՞նչ է, ամեն մարդ միսաֆիրութեան կ'երթա:

— Ամեն միսաֆիր մեկ չըլլար ա՛:

— Հիմա սա Մոսկովի սոֆորայի թախըմ չունի՞ եղեր:

— Ունի, ամա կ'ուղե կոր. ես մինչև որ ձեր տունը միսաֆիրութեան եկա նե շատ ծախս ըրի կ'ըսե կոր:

— Թող չի գար, մե՞նք ապեթ (հրավեր— Ն. Ն.) » ըրինք:

— Կնիկ, խելքդ չհասնիր ըսի, ա՛, կարճ կը կապեն»²⁴:

Ն. Պարոնյանը թուրքամետ չէ և նույն անողորմութեամբ մերկացնում է սուլթանական կառավարութեան հայատայաց քաղաքականութիւնը, հայութեան ծանր վիճակը, քրդերի և չերքեզների անիրավութիւնները հայերի նկատմամբ, որոնք քաջալերվում էին թուրքիայի պաշտոնական մարմինների կողմից: Նա թուրքիան բնութագրում է իբրև անզուսպ բռնութեան, ապօրինութեան երկիր, որտեղ կառավարութիւնն իր բնակչութեանը նախապես սովորեցնում է սովահարութեան, թունելներ է կառուցում իր ժողովրդին գերեզմանի վարժեցնելու համար: «Հոսհոսի» ձեռատետրում Սիցիլիայի Կատանիա քաղաքի թուրքական հյուպատոսին Հոմի բանկում գողութիւն անելու համար ձերբակալելու առթիվ Ն. Պարոնյանը հարցնում է. «Թե օտար կառավարութիւն մը ի՞նչ իրավունքով կը պատժե օսմանյան կառավարութեան պաշտոնյաներուն մեծ հնամանի սովորութիւնը:

Մենք ալ կձայնակցենք իրենց և կպոռանք: Կրոնքի և սովորութեան ազատութիւն»²⁵:

Եվ այսպես, գողութիւնն իբրև թուրքական «հնամանի սովորութիւն», որի առավել ընդհանրական փաստն այն է, որ նախկին խաչնարած քոչվորները նստած են ուրիշից հափշտակված հողի վրա և թուրքական են հորջորջում այն, ինչը իրենցը երբեք չի եղել և բռնութեամբ խլված է ուրիշներից: Նրանք իրենց տված խոստումները գրեթե և ստորագրած պայմանագրերը չկատարելու չգերազանցված վարպետներ են:

Բեռլինի վեհաժողովի որոշումների կապակցութեամբ Ն. Պարոնյանը գրում է. «Կայսերական սլախտի մեջ ամեն օր ժողովներ կգումաւրվին խորհրդակցութեան համար այն հնարքներու վրա, որովք կարելի լինի ո՛չ Տուլչինոն Քարատաղի (Սև լեռ — Չեռնոգորիա — Ն. Ն.) տալ, ո՛չ Յանյան Հունաստանի, ոչ ալ Բարենորոգում Հայաստանի:

24 Նույն տեղում . էջ 283–284:

25 Նույն տեղում . էջ 414–415:

Զարմանալու չէ, թուրք կառավարությունն միշտ առնելու վարժված ըլլալով միշտ կը դժկամի երբ իրմե բան մը խնդրվի»²⁶: Պարոնյանը թե՛ Բենդինի վեհաժողովից առաջ, թե՛ դրա ընթացքին և թե՛ դրանից հետո երբևէ հույս չի փայփայել, թե մեծ տերությունները հակված են լուծելու Հայկական Հարցը մինչև իսկ բարենորոգումների ձևով: Սակայն ոչ այն պատճառով, որ եղել է Օսմանյան բռնասիրության և Արևմտյան Հայաստանում նրա դադուրության լծի ջատագույն: Ամենևին ո՛չ: Իբրև խորաթափանց հեղինակ և նրբամիտ ու հեռատես քաղաքագետ, նա լավ էր հասկանում, թե որքան թանկ էր նստում արևմտահայության վրա մեծ տերությունների քաղաքականությունը: Ամեն անգամ, երբ սրվում էր Արևելյան ճգնաժամը և մեծ տերությունները սպառնալիքներ էին կարգում թուրքիային, արևմտահայությունը, և դա ավելի քան բնական էր ու բանական, ապրում էր խանդավառության պահեր՝ լցվելով, եթե ոչ ապատագրության, ապա վիճակի բարելավման հույսով: Հասկանալի է, որ նման դեպքերում արևմտահայությունը դրսևորում էր անսքող, ընդգծված համակրանք իր «փրկարարների», առաջին հերթին, ռուսների հանդեպ, որն անհետևանք չէր անցնում նրանց համար: Ավարտելով հերթական սպառնալիք, դիվանագիտական կամ ռադմադիվանագիտական բախումը թուրքիայի հետ, «փրկարարները» վերադառնում էին իրենց բաժինը ստացած կամ առանց դրա՝ լքելով հայերին բախտի քմահաճույքին: Եվ այն ժամանակ թուրքերը սկսում էին վրեժխնդիր լինել կայսրության «անհավատարիմ և դավաճան» հպատակներից: Այդ իսկ պատճառով, Հ. Պարոնյանը իր երգիծանքով ձաղկելով մեծ տերությունների արտաքին քաղաքականությունը թուրքիայի վերաբերմամբ, սլաշտպանում էր ոչ թե Օսմանյան կայսրության շահերը, այլ ձգտում էր հայությունը հեռու սլահել անտեղի, անհեռանկար և վտանգավոր խանդավառությունից, որսլեսդի հերթական անգամ նա չդառնա խաբեության և ոչ միայն խաբեության դո՛հ: Իբրև առաջադեմ մտավորական և մեծ մտածող, նա չէր կարող չասել ճշմարտությունն իր ժողովրդի կեղծ «բարեկամներին» ու շինծու «աղատարարներին» մասին, մանավանդ որ քիչ չէին այն հայերը, ովքեր անտեսելով սպտմության դասերը, նորից ու նորից ասպվինում էին նրանց ադետաբեր քաղաքականությունը: Ուստի նա անխնայորեն ծաղրել է այն հայերին, ովքեր տենդորեն ու թուլթակի փութաջանությամբ աղավաղված անգլերեն, ֆրանսերեն ու ռուսերեն էին սերտում «բարեկամներին» դալուց հետո «ինքնավար» Հայաստանում կուսակալներ դառնալու կամ այլ սլաշտոններ ստանալու և «փարա վաստկելու» ակնկալությամբ:

Եվ մի՞թե Օսմանյան կայսրության շահերի սլաշտպան կարող էր լինել այն դրողը, որի գրչին են սլատկանում հետևյալ սողերը. «Վա՛յ անոնց, որ կհանդղենին Հայաստան բառն արտասանել...»:

Դատական նախարարության կողմեն ծանուցադիր մը ղրկվեցավ Պատրիարքարան, խստիվ սլատվիրելով սրբազան Պատրիարքին, որ այսուհետև չդործածե Հայաստան բառը»²⁷: Այնուհետև ասվում է, որ ծանուցադիրը սլահանջում է Պատրիարքարանից Բ. Դուան խնդրադրեր հղել միայն կրո-

26 Նույն տեղում, էջ 433:

27 Նույն տեղում, էջ 447:

նական խնդիրների վերաբերյալ: Եվ Պարոնյանն ավելացնում է. «Իսկ երբ մեր ինչքն, կյանքն ու պատիվը բռնաբարվին՝ սրբազան Պատրիարքը լուռություն սահեցու է եղեր»²⁸:

Մի՞թե Բեռլինի սրահատառի 61-րդ հոդվածի անտերուծյան մասնաված լինելու արձագանքը չէին երգիծաբանի հետևյալ խոսքերը «Լուսաբերի նամակներից». «Երթաք բարյավ իմ ծիծաղներ, եթե Թուրքիո Հայաստանեն պիտի անցնիք, զգուշացեք, որ քյուրտերեն չկողոստվիք թեև կողոստվելու համար ոչինչ ունենաք»²⁹:

Բեռլինի վեհաժողովից հետո արևմտահայութունը հիշեցնում էր գաղազած գորշ գայլի երախը նետված գլաղիատորի: Իսկ գազանին գաղաղեցրել էին մեծ տերությունները: Սա օգտակար է հիշել այսօր և ընթերցել ու վերընթերցել Հ. Պարոնյանի արտակարգ սուր և սթավի երգիծանքը, քանզի մեր օրերում էլ, հայկական անկախ պետությունը շարունակում է կառչել մեծ տերությունների ողորմածությունից, թեև կա և երրորդ աշխարհ, և թեև միանգամայն պարզ է, որ մեծ տերությունների երկրաքաղաքական շահերի ասլահովման առուծախում հայ ժողովուրդը և նրա պատմական ու ընթացիկ խնդիրները, այդ թվում Հայ գատի բաղկացուցիչ մասը հանդիսացող արցախյան հիմնահարցը ավելին չեն, քան մանրագրամ: Նույնիսկ Ռուսաստանի քաղաքականությունը համար, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սլայմաններում, հայերը և նրանց ազգային Դատը մշաապես՝ թե՛ ցարիզմի ու ժամանակավոր կառավարության օրոք, թե՛ խորհրդային կարգերի սարիներին եղել են արտաքին քաղաքականության միջոց, բայց ոչ երբեք նպատակ: Բրիտանական արտաքին քաղաքականության պատմության լավագույն դիտակներից մեկը՝ անգլիացի պատմաբան Պոլ Բենեդիկտի հաստատում է, որ «ռուսական կառավարությունը և մյուս տերությունների կառավարությունները Օսմանյան կայսրության կայունության ավելի առաջնային նշանակություն էին տալիս, քան հայերի ճակատագրին»³⁰: Ինչ վերաբերում է անմիջապես Մեծ Բրիտանիայի դերին Հայկական հարցում, ապա մինչև իսկ անգլիական իմպերիալիզմի ամենակարկառուն զեմքերից Լիոյդ Ջորջը խոստովանել է, որ «բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895–1897 և 1909 թվականների զարհուրելի սպանդներին և 1915 թ. ամենասարսափելի կոտորածին»³¹:

Գալով հայերի «գավաճանություն» վերաբերյալ թուրքական բարբառանքներին, որոնք այսօր էլ թուրք գրչակների համար հայոց ցեղասպանությունը արդարացնելու միջոց են ծառայում, հարկ է ընդգծել, որ գավաճանություն անվանել սարուկի իլձը, ազատագրվելու սարկատիրոջ ճիրաններից, առնվազն քաղաքական սգիտություն է: Եվ օսմանյան լծի տակ տառապած ու տառապող ո՞ր ժողովուրդը չի ձգտել ազատության և

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում, էջ 507:

30 P a u l K e n n e d y. The Realities Behind Diplomacy. Background influences on British External Policy, 1865-1980. Glasgow, 1989. p.104.

31 Д ж о р д ж Д е в и д Л л о й д. Правда о мирных договорах. Т. 2. М., 1957, с. 390.

անկախություն: Մի՞թե դավաճանությունն էր հույների, բալկանյան սլավոնների, ռուսինացիների, մահմեդական արաբների սլայքարը ազատագրության համար: Եվ մի՞թե դավաճանությունն է քրդերի սլայքարը անկախության համար մեր օրերում, այն քրդերի, որոնք երիտթուրքերի ձեռքին կայր գործիք ծառայեցին հայոց Մեծ եղեռնը իրականացնելու գործում: Թերևս չկա և չի կարող լինել ավելի մեծ անհեթեթություն, քան «հավասարություն» կամ «դավաճանություն» փնտրելը դահճի և զոհի հարաբերություններում:

Առանձնահատուկ ուշադրություն է արժանի մեծ տերությունների դեկլարաներին և դիվանագետներին Հ. Պարոնյանի սված բնութագրերը: Ընդ որում, նրա դրչից չեն վրիպել ո՛չ Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ը, ո՛չ Անգլիայի թագուհի Վիկտորիան, ո՛չ Գերմանիայի կայսր Վիլհելմ I-ը, ո՛չ Ավստրիայի կայսր Ֆրանց-Հովսեփը, ո՛չ Իտալիայի թագավոր Վիկտոր էմանուելը և ո՛չ էլ նրանց դիվանագիտական գերատեսչությունների ղեկավարները, նրանց դեսպաններն ու հանձնակատարները:

Ռուսական ցարերի մասին կարելի է բնութագրող և ընդհանրացնող շատ նյութեր գտնել ռուսական պատմագրական գրականության մեջ, ինչպես ընդհանուր կարգի, այնպես էլ կենսագրական բնույթի: Բացառություն չի կազմում և Ալեքսանդր II-ը: Անշուշտ, հաղիվ թե Պարոնյանը ծանոթ է եղել այդ գրականության հետ, մանավանդ, որ չի իմացել ուսուցիչներ: Բայց նրա երգիծանքի այն հատվածները, որոնք վերաբերում են Ալեքսանդր II-ի քաղաքականությանն Արևելյան հարցում, դարձանալիորեն ճշմարտացի են ու դիպուկ: Ընդ որում, 1870-ական թվականների կեսերին սկիզբ առած ճգնաժամը առաջինը չէր Արևելյան հարցում և ցարական Ռուսաստանը առաջին անգամը չէր, որ միջամտում էր այդ ճգնաժամին և կուտակել էր բավականաչափ փորձ, որի էությունն, ամենայն հավանականությամբ, հայտնի էր Հ. Պարոնյանին:

Ռուս խոշորագույն պատմաբան Ս. Սոլովյովը իր «Հունական ապստամբությունը» աշխատության մեջ, նվիրված օսմանյան լծի դեմ հույների 1821 թ. պինված ապստամբությանը, անդրադառնալով մեծ տերությունների քաղաքականությանն Արևելյան հարցում, այն տեսակետն է արտահայտում, թե մինչև XVIII դ. վերջը նրանց վերաբերմունքը թուրքիայի քրիստոնյաների նկատմամբ ուներ կրոնական ուղղվածություն: Արևմուտքում Ռուսաստանին մշտապես վերագրում էին թուրքիայի եվրոպական մարզերին տիրելու մտադրություն օգտվելով նույնահավատ և նույնացեղ բնակչության համակրանքից: «Այդ կասկածը փոխադրվեց տասնութերորդ դարից տասնիններորդ դար և շարունակում էր Արևելյան հարցի վերաբերյալ քաղաքական հայացքի հիմք ծառայել»³²: Սակայն XVIII դ. վերջից, ըստ Սոլովյովի, կրոնական ուղղությունից հետո անրապեսող քաղաքական ուղղությունը, հեղափոխական շարժումների ազդեցությամբ, ստիպված էր հաշվի նստել ժողովուրդների սլահանջների և դրանց նկատմամբ ընդհանուր կարեկցանքի հետ: «Այստեղից, — դրում է Ս. Սոլովյովը, — Արևելյան հարցի նկատմամբ հայացքը պետք է փոխվեր. մի կողմից, կա-

32 С. М. С о л о в ь е в. Избранные произведения. Т. 3, Ростов-на-Дону, 1997, с. 533.

ուսումնասիրության համար կարևոր էր Ռուսաստանի հանդեպ ունեցած վախից սատար լինել թուրքիային, որպեսզի նրա անկման հետևանքով չուժեղացնեն Ռուսաստանը նոր հպատակներով կամ նոր բնական դաշնակիցներով, բայց մյուս կողմից, կառավարությունները պետք է հաշվի նստեին իրենց հպատակների կարեկցանքի հետ դեպի թուրքական մարզերի քրիստոնյա բնակչության պահանջները, դեպի քաղաքակրթության քրիստոնեական հիմքեր ունեցող ժողովուրդների բարբարոսական լծից ազատազրկելը»:

Ընդհանուր առմամբ այս տեսակետը ճիշտ, բայց թերի է նախ այն պատճառով, որ Ռուսաստանի մասնակցությունը ոչ այնքան «նոր հպատակներ և բնական դաշնակիցներ» ձեռք բերելն էր, որքան նոր տարածքների տիրանալը, որն արդարացվում էր նաև «Երրորդ Հոսմի» ծրարով: Իսկ այդ տարածքները Ռուսաստանը մոտեցնում էին Հնդկաստանին, որը բաղաձայնաբան անթուլյատրելի էր Անդլիայի շահերի տեսանկյունից, մի բան, որ ճիշտ նկատել է Հ. Պարոնյանը: Դրանով էլ նա բացատրում է թուրքիայի ամբողջությունը պահպանելու Դիդրսյելիի քաղաքականությունը:

Մյուս կարևոր հանդամանքն այն էր, որ թուրքահպատակ քրիստոնյաներ ասելով, Սուլվյովը նկատի ունի բալկանյան սլավոններին՝ միայն («նուրնահավատ և նույնացեղ»), իսկ Արևելյան հարցի շրջանակները սահմանափակում է թուրքիայի եվրոպական մարզերով: Չկան Արևմտյան Հայաստանը և արևմտահայերը, թեև ռազմական ու դիվանագիտական վայրիվերումներում թուրքահպատակ հայերի հարցը մշտապես առկա է ռուս-թուրքական հարաբերություններում: Սա նույնպես նկատել է Հ. Պարոնյանը և ենթարկել շանթահարող քննադատության, մասնավորապես, կասկած «ձարի» (Ալեքսանդր II ցարի) քաղաքականության հետ Արևելյան Հարցում 1870-ական թվականներին:

Ալեքսանդր II-ը ռուսաց պատմության մեջ փառաբանված է ամենից առաջ 1861 թ. փետրվարի 19-ի ռեֆորմի համար, որով վերացվեցին ճորտատիրական կարգերը Ռուսաստանում: Մինչև իսկ Գերցենն աքսորավայրից գրեց հիացական նամակ, անվանելով Ալեքսանդր II-ին «Ազատարար», որին չեն մոռանա «ոչ ռուս ժողովուրդը, ոչ համաշխարհային պատմությունը»³³: Թեև նույն Գերցենը հետադաշնում ստիպված էր գրել. «Ինչու այդ մարդը չմեռավ նույն օրը, երբ հայտարարվեց ռուսական ժողովրդի ազատագրության մասին ֆեստ...»³⁴, միևնույն է, Ալեքսանդր II-ի պատմական դերն անժխտելի է: Անտարակույս, իրենք՝ ռուս պատմաբանները այդ դերը չեն բացարձակացնում, միաժամանակ չժխտելով, որ խնդիրը վերաբերում է Ռուսաստանի ներքին քաղաքականությանը: Դ. Իլովայսկին, անդրադառնալով 1877-1878 թթ. ռուս-թուրքական սլաոնապատերազմին, Սան-Ստեֆանոյի պայմանագրին և Բեռլինի տրակտատին, Ռուսաստանի նահանջը արևմտաեվրոպական անբուժյունների ճնշման ներքո՝ պատերազմում հաղթելուց հետո, բացատրում է Ալեքսանդր II-ի կառավարության

33 Слов Г. Ч у л к о в. Императоры. Психологические портреты. М., 1991, с. 234 – 235.

34 Նույն տեղում, էջ 235:

«Հափափորությամբ ու խաղաղասիրությամբ», որը չէր ցանկանում «Արևելյան Հարցում առավել շահագրգռված տերութիւնների հետ խղճման առիթ տալ»³⁵: Իհարկե, Իլովայսկին չի էլ նշում, որ այդ նահանջը կապված էր, ամենից առաջ, արևմտահայութեան հարցի և «բարենորոգումների» պահանջի հետ: Ռուս պատմաբանները գերադասում են սահմանափակվել բալկանյան սլավոնների խնդրով:

Վ. Օ. Կլյուչևսկին, որը Ալեքսանդր II-ին բնութագրում է իբրև «ցար-ոսֆորմատոր», գտնում է, որ «նրա բոլոր ռեֆորմներն աններելի ուշացած էին, մեծազոգաբար մտահղացված, հասկանալի մշակված և անբարկսիղճ կատարված, բացի, թերևս, դատական ու զինվորական ռեֆորմից...»³⁶: Մի՞թե «անբարեխիղճ» կատարված չէր Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ իրականացնելու պահանջը, որը Ռուսաստանը ներկայացրեց Թուրքիային դեռևս Սան-Ստեֆանոյի պայմանագրով: Վ. Օ. Կլյուչևսկին իր «Ռուսական պատմագրությունը 1861–1893 թթ.» աշխատության մեջ գրում է, որ «կողմնակի գիտորդին Ռուսաստանը ներկայանում էր իբրև մեծ նավ, որը սուրում է բոլոր առաջատները սլարգած, բայց առանց քարտեզների և կողմնացույցի»³⁷: Խոսքը վերաբերում է Ալեքսանդր II-ի ժամանակաշրջանի Ռուսաստանին, որն ազատագրվեց ճորատասիրական իրավունքից հափաղանց ուշացած, երբ «նրա եվրոպական ավագ եղբայրները հասցրել էին մոռանալ, որ այն երբևիցե եղել է իրենց մոռ և մաքրել էին իրենց կենցաղը, իրենց բարքերը դրա բոլոր հետքերից: Ալեքսանդր II-ը կատարեց մեծ, բայց Ռուսաստանի ուշացած ռեֆորմը. ռեֆորմի մեծութեան մեջ կայսրի մեծ պատմական ծառայությունն է, ռեֆորմի ուշացման մեջ ռուս ժողովրդի պատմական մեծ դժվարությունը»³⁸:

Իհարկե, դյուղացիական ռեֆորմը, չնայած իր ողջ անկատարելիութեանը, ջրբաժան գիծ էր ռուսաց պատմության մեջ, որն ըստ Կլյուչևսկու, այդ պատմությունը բաժանեց նախառեֆորմային և ետռեֆորմային շրջանների³⁹: Եթե այս բաժանումը ճիշտ է Ռուսաստանի ներքին կյանքի զարգացման առանձնահատկությունների իմաստով, ապա արտաքին քաղաքականության համար այն ոչ մի նշանակություն չունի: Արևելյան Հարցում, մասնավորապես դրա այն մասում, որը վերաբերում է արևմտահայութեան ճակատագրին, մենք էական փոփոխություն չենք տեսնում: Ուժի մեջ էր մնում Արևելյան Հարցում Ռուսաստանի արտաքին քաղաքականության այն պատկերը, որը ուրվագծել էր Ս. Սոլովյովը: Ինչպես գրել ենք մեր «Ճարագիր Հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը» գրքում, արևմտահայութեան հարցը Ռուսաստանի

35 Д. И. Иловайский. Древняя история. Средние века. Новая история. М., 1997, с. 520.

36 В. О. Ключевский. Изв. акад., т. 1, էջ 342:

37 В. О. Ключевский. Исторические портреты. Деятели исторической мысли. М., 1990, с. 553.

38 Նույն աեղում, էջ 554:

39 Նույն աեղում, էջ 553:

Համար մնում էր լուկ արտաքին քաղաքականության միջոց⁴⁰։ Այդ պատճառով Հ. Պարոնյանը մեծ կասկածանքով էր վերաբերվում Ալեքսանդր II-ի քաղաքականությունը, ինչպես մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, այդպես էլ դրանից հետո, անտարակույս չվստահելով և արևմտյան տերություններին։ Ռուսաց «ձարի» (ցարի) Թուրքիային պատերազմ հայտարարելու նպատակը քրիտոսոնեից վիճակի բարելավումը չէ, այլ իր «գորաց սուրբ Գեորգ պատվանշան» բաժանելը⁴¹։ Այսպես է եզրակացնում երգիծաբանը Ալեքսանդր II-ի իր գործերին ուղղված խոսքերից։

Հ. Պարոնյանը բողոքից «կամթում» է Դեսպանաժողովը (կոնֆերանսը), որը բացվեց 1876 թ. դեկտեմբերի 23-ին Կոստանդնուպոլսում մեծ սերուբյունների դեսպանների մասնակցությամբ։ Կոստանդնուպոլսի կոնֆերանսը չկանխարգելեց պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Այն իրականություն դարձնելու հարցում կարևոր դեր խաղաց դերմանիայի կանցլեր Օտտո Ֆոն Բիսմարկը։ Բիսմարկն իր մասին ասել է, որ նախախնամությունը նախապես հող է տարել, որ ինքը դառնա դիվանագետ, քանի որ ծնվել է ապրիլի 1-ին։ Գերմանական կայսրության ստեղծումից հետո, ինչպես գրում է եվրոպական դիվանագիտության ոլորտում լինող քաջատեղյակ ֆրանսիացի պատմաբան Ա. Դեբիուրը, Բիսմարկի փոխափոխ մտահոգությունն իր «ստեղծագործությունը» պահպանել և ամրապնդելն էր⁴²։ Ահա թե ինչու Բիսմարկն ասում էր, որ հանուն Հայրենիքի կարելի է հրաժարվել ոչ միայն կյանքից, այլև պատվից։ Բայց պատվարժանությունը, որպես կանոն, ընդհանրապես պետք չէր Բիսմարկին։ Եվ Պարոնյանը հարցնում է. «Բրենս Պիսմարքին քաղաքականության ինչ ըլլալը իմացա՞ք»։

Այս մարդը խաղաղությունը ապահովելու պիտի աշխատի եղեր, եթե Ռուսիա Թուրքիո դեմ պատերազմ հրատարակե՝ այս իշխանը թող չսլիտի տա եղեր, որ մյուս տերությունք միջամտեն։

Ըսել է, որ եթե մյուս տերությունք Ռուսիան Թուրքիո հետ հաշտեցնելու համար ալ միջամտություն ընել ուզեն՝ Պիսմարքը թող չսլիտի տա, որպեսզի խաղաղությունը չվրդովի։

Շնորհակալ ենք⁴³։

Իրականում Բիսմարկը խրախուսում էր Ռուսաստանին պատերազմ սկսելու Թուրքիայի դեմ հավաստիացնելով, որ ինքը թույլ չի տա, որ մյուս տերությունները միջամտեն և Ռուսաստանը կկարողանա հանգիստ հաշվեհարդար տեսնել Թուրքիայի հետ։ Իսկ այդ պատերազմը պետք էր Բիսմարկին, որպեսզի մեծ տերությունները խճճվեն Արևելյան Հարցի մեջ և նորաստեղծ Գերմանական կայսրությունը հնարավորություն ստանա ամրապնդվել և հարմար պահին հանգես դալ հաշտարարի դերում։ Այդ-

40 Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Տարափր Հայության Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը. Երևան, 2002, էջ 173։

41 Հ. Պ ա ռ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 111։

42 Տե՛ս՝ А. Д е б и д у р. Дипломатическая история Европы. Т. 2, М., 1974, с. 420.

43 Հ. Պ ա ռ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 78։

պես էլ եցավ, բայց «ազնիվ մակերը», հսկառակ իր խոստման, խիստ շահախնդիր գեր խաղաց իբրև Բեռլինի վեհաժողովի նախագահ: Անշուշտ, նաև Հայկական հարցում, որը Բիսմարկի համար տեղական նշանակություն ունեցող հարց էր և Բեռլինի վեհաժողովի «ավելորդ զարգանալը»⁴⁴: «Խոտորում»-ում Բիսմարկին և Ավստրո-Հունգարիայի արագորժնախարար Անդրաշին Պարոնյանը բնութագրում է իբրև «պետական երկու մեծ մարդ, թե՛ հասակով և թե՛ սատանայությամբ»⁴⁵:

Ահա այս սատանայական մարդը՝ Բիսմարկը, Արևելյան հարցն ավելի բարդացնելու և Բալկաններում Ռուսաստանի ու Ավստրո-Հունգարիայի հարաբերությունները սրելու միտումով վերջինիս խորհուրդ էր տալիս միջամտել կոնֆլիկտին, քանի որ Ավստրո-Հունգարիան մտադիր էր զավթել Բոսնիան և Հերցեգովինան, որոնք ապստամբել էին թուրքական լծի դեմ և հույս ունեին անկախանալ ռուսների օգնությամբ: Ընդ որում, Բիսմարկը հավատարիացնում էր Անդրաշին, թե ինքը կապահովի Ավստրո-Հունգարիայի ապագան, ինչի առթիվ Պարոնյանը դրում է. «Դեռ առաջի օրը այս իշխանը Ռուսիո համակիր ըլլալը կհայտնեք, այսօր այ Ավստրիո՝ յուր բարեկամին ապագան աղահուլելու խոսք կուտա:

Իր բարեկամին, Ավստրիային ապագան սլխի ապահովի... Պիսմարքը... սա Պիսմարքը... մեր ճանչցած Պիսմարքը...»

«Այս խոսքը Ավստրիո համար բարեգուշակ չէ. արդյոք խեղճին ապագան խնդրոց կա՞րդը կ'ուզե անցունել Պիսմարք... դու ի՞նչ կըսես, եղբայրս Անտրասի:

Ե՞ս ինչ կըսեմ, ես կսեմ, որ Պիսմարքին սա ապագաս առ ու սահն ըսելը գինեմսլի մը սա օղին առ ու սահն ըսելեն մաղի չափ տարբերություն չունի»⁴⁶:

2. Պարոնյանը երգիծական քննադատության է ենթարկում մեծ տերությունների արտաքին քաղաքականությունը գլուխ կանգնած մյուս դիվանագետներին՝ Անդրաշին, Գորչակովին, Դիպրայելին: Նա համոզված է, որ Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբությունը և արևմտահայաստանյան հարցը այդ պետական այրերին պետք են սոսկ թուրքիայի վրա ճշում գործադրելու համար թուրքահայաստակ քրիստոնյաների վիճակով մտահոգված լինելու կեղծ պատրվակով, որպեսզի Բ. Դունից գիջումներ կորզեն հօգուտ իրենց պետական շահերի: Նա շանթահարում է Անգլիայի արտաքին խիստ շահախնդիր քաղաքականությունը և Արևելյան հարցի շուրջ Անգլիայում ստեղծված հասարակական կարծիքը, որը Դիպրայելի օրոք հանդեպ հսկառուսական գոեհիկ շովինիզմի հայանի «ջինդօրիզմ» անունով:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 1876 թ. մայիսի 13-ին Գերմանիան, Ռուսաստանը և Ավստրո-Հունգարիան (Բիսմարկ, Գորչակով, Անդրաշի) ընդունեցին հուշագիր, որը նախատեսում էր, Գորչակովի խոսքերով. «բարեխաված status-quo», այսինքն՝ երեք կայսերական արքունիքների նպատակն, իբր, Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումն

44 Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 170:

45 Հ. Պ ա ռ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 310:

46 Նույն տեղում, էջ 103:

էր, սակայն նրա քրիստոնյա հպատակների բալկանյան սլավոնների ճակատագրի բարելավմամբ: Բնականաբար, հայերը մնացել էին հիշյալ տերությունների դիվանագիտական տեսադաշտից դուրս: Հայկական հարցը կհայտնվի մեծ տերությունների պլաններում 1877–1878 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո միայն՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի ձևով՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի ջանքերով, իսկ Բեռլինի տրակտատում թվանշանները կվիտխեն իրենց տեղերը և 16-րդ հոդվածը կդառնա 61-րդ հոդված:

Ֆրանսիայի և Իտալիայի կառավարութայունները անմիջապես հայտարարեցին, թե համաձայն են վերոհիշյալ հուշագրի հետ: Բայց Անգլիան, հանձինս Դիզրայելի կաբինետի, հանդես եկավ ընդդեմ նոր միջամտութայան հոգուտ բալկանյան սլավոնների: Եղիսաբեթ I թագուհու օրոք Եվրոպայում խոսում էին միապետուհու կողմից թաքուն հովանավորվող ծովահենների (Հոուկինս, Դրեյկ), այսպես կոչված «թագուհու ծովային գայլերի» մասին: XIX դ. վերջին կարելի էր խոսել Վիկտորիա թագուհու դիվանագիտական գայլերի մասին, որոնց ոհմակի գլուխ կանգնած էր ծաղումով հրեա Դիզրայելին (լորդ Բիկոնսֆիլդ): 1877–1878 թթ. ուս-թուրքական պատերազմի նախօրեին լարվածության ուժեղացման պայմաններում «Լորդ Պիքոնսֆիլդ բարեհաճեր է հայտնել, թե թագուհու վրդյան կառավարութայունը խաղաղութայուն կ'ուզե, թե՛ Թուրքիո քրիստոնեից վիճակին բարավորում կ'ուզե, թե՛ եթե պատերազմ ծագի արդարութայան համար սլիտի պատերազմի:

Ինչու՞ ուրեմն պարոն լորդ Պիքոնսֆիլդ այս մասին բրենս Կորչաքովին հետ չբանակցի, քանի որ անոր ալ ուզածը, իր խոսքին նայելով, թագուհու վրդյուն ուզածներն են:

Ըստ իս այս մարդիկ կամ իրարու լեզու չեն հասկնար կամ ուզածներն չեն դիտեր»,— գրում է Հ. Պարոնյանը «Կամիթներում»⁴⁷: Իսկ Անգլիայի համար «արդարութայունն» ըստ Հ. Պարոնյանի, «Թուրքիո ամբողջութայունը» պահպանելն է, իբրև սլավար Ռուսաստանի դեմ, թուրք չտալու վերջինիս մոտենալու Հնդկաստանի մատույցներին: «Անգլիա և Ռուսիա. կատակերգութայուն մեկ արարով» գործում Անգլիան և Ռուսաստանը բանավիճում են.

«Անգլ.— Ա՛յ ասոր չեմ կրնար համբերել:

Ռուս.— Ո՞ր բանի:

Անգլ.— Ձէ՛, չեմ կրնար:

Ռուս.— Ըսե՛:

Անգլ.— Ի՞նչ ըսեմ. կրնա՞ս կարծել, որ Հնդկաստանի ճանքան գոցելու ըլլաս և իմ շահուս վնաս հասցնես նե ես ասանկ անտարբեր մնամ, ես, որ Թուրքիո ամբողջութայունը պաշտպանելու պարտավոր եմ:

Ռուս.— Հնդկաստանի ո՞վ վնաս պիտի հասցունե:

Անգլ.— Եթե Հնդկաստանի վնաս մը տեսնամ ան ատեն չեմ կրնար ասանկ անտարբեր մնալ. կը հասկնա՞ս:

Ռուս.— Կը հասկնամ:

47 Նույն տեղում, էջ 83-84:

Անգլ. — Ուրեմն միտքեդ հանե՛ Հնդկաստանի վնաս հասցնելու գաղափարը: Եթե ոչ՝ ամեն բան տակնուվրա կ'ընեմ: Հնդկաստանի դայցունել տալ մի ... ատ ըլլալու բան է:

Ռուս. — Մեր միտքեն ատանկ բան մը անցած է. մեր նսլատակը միայն սա քրիստոնեից վիճակին բարվոքումն է:

Անգլ. — Իմ ալ նսլատակս Թուրքիո ամբողջությունը պահպանելն է...»⁴⁸:

Անգլիայի հասարակաց կարծիքը Յ. Պարոնյանը համեմատում է հովանոցի հետ, որը «հովը քիչ մը սաստիկ փչելուն պես մյուս կողմը կը դառնա կոր...

Սերեցեք այս նմանությանս ազնիվ անդղիացիք, բայց զրուցեցեք ձեր հասարակաց կարծյաց, որ քիչ մը հաստատամիտ ըլլաւ և որտեղե շահ տեսնա՝ այն կողմը չդառնա... օրը հազար անգամ»⁴⁹: Պարոնյանը անգլիական հասարակական կարծիքը նմանեցնում է հին հռոմեական առասպելաբանության Յանուսի հետ, սրի երկու դեմքերը նայում էին հակառակ կողմեր:

Մեր վերոհիշյալ դրքում նշել ենք, որ Հայ դատի սփյուռքահայ հայտնի մասնագետ Վ. Տատրյանի կարծիքով սլավոնական ազգությունները՝ սերբերը, բուլղարները և չեռնոգորիացիները վայելում էին ռուսական հովանավորությունը՝ շնորհիվ ռուսների հետ իրենց էթնիկական ընդհանրության, իսկ հույները, ռումինացիները և վալախները դավանում էին ուղղափառություն, ռուսի և հավատակից էին ռուսներին⁵⁰: Ռուսական պատմագրության մեջ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը դիտվում է իբրև առավելապես «բալկանյան պատերազմ», «սլավոնական խաչակրաց սրչավանք», «պատերազմ սլավոնների ազատագրության համար»: Ըստ Ս. Օլգենբուրգի, այն ռուսական ուժերի վիթխարի լարում էր «հոգուտ բալկանյան սլավոնության շահերի»⁵¹: Ռուս խորհրդային պատմաբան Վ. Ջոլոտարյովը ռուս-թուրքական պատերազմի արդյունքների մասին գրում է, որ «հաղթելով ճակատամարտի դաշտերում, Ռուսաստանը պարտություն կրեց դիվանագիտական բանակցությունների սեղանի շուրջ»⁵²: Դրանով Վ. Ջոլոտարյովը նկատի ունի բալկանյան սլավոններին, որոնց հարցում Ռուսաստանը չկարողացավ հասնել առավելագույնին, որին ձգտում էր: Օրինակ, Ռուսաստանին չհաջողվեց հասնել Բոսնիայի և Հերցեգովինայի անկախությանը. իր արևմտյան դործընկերների ճնշման տակ նա ստիպված եղավ համաձայնել թուրքական լուծն այնտեղ փոխարինել Ավստրիայի տիրապետությամբ: Այնուհանդերձ, այն, ինչին հասավ Ռուսաստանը, վերաբերում էր ցեղակից սլավոններին: Մինչդեռ Ռուսաստանի պարտությունը Բեռլինում կատարյալ էր հենց Հայկական հարցում: Բայց գրանում հանցավոր էին ոչ միայն Անգլիան, Գերմանիան և Ավստ-

48 Նույն տեղում, էջ 253-254:

49 Նույն տեղում, էջ 116:

50 Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 165:

51 С. С. О л ь б е н б у р г. Царствование Николая II. М., 1992, с. 8.

52 В. А. З о л о т а р е в. Россия и Турция. Война 1877-1878 гг., М., 1983, с. 115.

րո-Հունդարիան, այլև Ռուսաստանը, որի համար Հայկական Հարցը բացարձակապես երկրորդական խնդիր էր: Դա է ապացուցում 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնում Անգլիայի արտգործնախարար Սոլսբերիի և Ռուսաստանի դեսպան Շուվալովի ստորագրած դադարի համաձայնագիրը, որով Ռուսաստանը սլարտավորվում էր վերագործնել Թուրքիային իր գրաված Բայազետը և Ալաշկերտի հովիտը, հավաստիացնում էր Անգլիային, որ ասպագայում չի ընդլայնի իր սահմանները Ասիական Թուրքիայի (իմաս՝ Արևմտյան Հայաստանի) կողմից և 7-րդ հոգվածով համաձայնում էր, որ Հայկական վերայեթներում բարենորոգումների գործը վերահսկի ոչ միայն Ռուսաստանը, այլ նաև Անգլիան:

Այս դադարի համաձայնությունը փաստորեն կանխորոշեց Հայկական Հարցի ճակատագիրը Բեռլինի վեհաժողովում:

Անտարախույս, Հ. Պարոնյանը չէր կարող զիտենալ Լոնդոնի դադարի համաձայնագրի, ինչպես նաև 1878 թ. հունիսի 4-ին Կոստանդնուպոլսում կնքված անգլո-թուրքական դադարի կոնվենցիայի մասին, որը դարձյալ գործարք է, ուղղված Հայ դատի դեմ, քանզի թուրքերը կիրառեցին Անգլիային և այն պայմանով, որ վերջինս խոստանում էր ռազմական ուժով սլաշարանել Թուրքիային, եթե Ռուսաստանը ուղենար պահպանել պատերազմի ժամանակ գրաված Կարսը, Արդահանը, Բաթումը կամ հետագայում փորձեր նոր նվաճումներ կատարել Ասիական Թուրքիայում: Ի դեպ, Անգլիան խոստանում էր Ռուսաստանին ստիպել Թուրքիային վերագործնել Բայազետը և Ալաշկերտի հովիտը, որոնց հարցում արդեն ստացել էր Ռուսաստանի համաձայնությունը մայիսի 30-ին ստորագրված համաձայնագրով: Այդ մասին թուրքերն, իհարկե, չգիտեին:

Այս համաձայնություններին անտեղյակ լինելով հանդերձ (գրանց դադարիության պատճառով) Հ. Պարոնյանն, այնուամենայնիվ, հստակորեն տեսնում էր, որ ռուսական քաղաքականությունը, մեղմ ասած, հետևողական չէ հայերի հարցում և տուրք է տալիս սլավոնականությունը: Նա դառնություններ գրում է. «... միթե՞ սլավաց քրիստոսը ուրիշ, մերը ուրիշ է: Լոկ քրիստոնյա ըլլալը օգուտ չունի եղեր, թե քրիստոնյա ըլլալու է և թե Եվրոպական Տաճկաստանի մեջ ըլլալու է եղեր, աս ի՞նչ անիրավություն է»⁵³: Մեկ այլ հոգվածում Պարոնյանը շեշտում է. «Ամենն առաջ մենք կրեցինք արևելյան խնդրո հարվածը, այո՛, մենք կրեցինք, որովհետև սլավ ցեղե չէինք. եթե սլավ ըլլայինք ռուսը թող չէր տա որ Պոլսո մեջ թորփիլի փորձ ըլլար»⁵⁴:

Քննադատելով ռուսական «Կոլոս» („Голос“) լրագրում տպագրված «Հիսուս և սլաթերագմ» հոգվածը, որտեղ ասվում է, թե «Հիսուս պետք է զայրանա ձարի դեմ», եթե սլավոնական դավառների ազատությունը ձեռք չբերվի, Պարոնյանը եղրակացնում է. «Եվ այսպես խոսելով ռամիկ ժողովրդյան այնպես սլիտի կլլեցունե, թե Հիսուս խարուցյուն կը գնե հայ և սլավ քրիստոնեից մեջ, թե Հիսուս սլավները հայերեն շատ... ո՛չ... հայերը սլավներեն նվազ կը սիրե:

53 Հ. Պարոնյան. նշվ. աշխ., էջ 56:

54 Նույն տեղում, էջ 121:

Զրպարտութիւնն Զրպարտութիւնն + Անիրավութիւնն - Մարդկութիւնն = Սլավութիւնն»⁵⁵:

Այս երկրի ծակն թվարտութիւնը սլավոնաֆորիա է: Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքը չի վերաբերում ժողովուրդներին: Նա ձաղկում է, և արգարադիրներն, մեծ տերութիւնների ղեկավարներին, նրանց պիւլանապիտութիւնը, որի համար փոքր ժողովուրդների ճակատագիրը եղել և մնում է իբրև խաղաքարտ, որը թղթախաղի սեղանի շուրջ խմբված շահամոյ խաղացողները հրապարակ են հանում, երբ դա համարում են անհրաժեշտ իրենց սեփական շահերի համար: Այս տեսանկյունից պարզապէս սպանիչ են «Կսմիթները» այն վրավագները, որոնք վերաբերում են նեղուցների շրջանում անդլիական նավատորմի հակառուսական ցուլցերին, երբ ռուսական բանակն ընդհուպ մոտեցել էր Կոստանդնուսըսլին: «Անդլիական նավատորմիդը վերջապէս դանվեցավ», - գրում է Պարոնյանը:

«Կղզիներուն առջևը եկեր նստեր է ... առաջ դալու կամնչնա կոր»:

Ինչու՞ եկավ այս նավատորմիդը:

Հանգիստ եղե՛ք, չարութիւնը ընելու համար եկած չէ, բարութիւնը ընելու համար ալ եկած չէ, միմիայն Արևելքի մեջ յուր սլատիվը կոտրել չտալու համար եկած է եղեր:

Անգլիո կառավարութեան ըսեր են եղեր թե՛ եթե քո նավատորմիդը Պոլիս չկարենաս մտցնել, մեծ պղտիկութիւնն կը հրավիրես վրադ:

Է՛հ, ընթերցող, մեկը քեզի անանկ խոսք մը ըսեր նե՛ հարկավ դուն ալ պղտիկ մնալ չէիր ուզեր ա՛:

Կ'ըսվի թե Գալիո և Իապլիո կառավարութեանց ալ նավատորմիդները քիչ օրեն պլտի դան, որպէսզի անոնք ալ պղտիկ չմնան...»⁵⁶:

Այնուհետև «Անգլիական նավատորմիդը ռուսական բանակին հետ քասրիլ խաղալ սկսած ըլլալով, ասջի օրը եկավ ռեվերանսը ըրալ ու ետ քաշվեցավ»⁵⁷:

Ավելի ուշ, անգրագառնալով այդ «գերարժանապատիվ» տերութիւնների «ինքզինքնին պղտիկ չձգելու», այսինքն իրենց նվաստացած չղգալու հարցին, Պարոնյանը ծաղրում է. «Պարտ անձին կը համարիմ ընթերցողացս ծանուցանել, որ հանգիստ ըլլան, և մտքերեն բան մը չանցունեն Դուսիո բանակին ու Անգլիո տորմիդին Պոլսո առջև դանվելուն վրա, ատոնք բարեկամաբար եկած են:

Կրնամ ըսել, որ մեր մտքեն չարութիւնն կ'անցնի, անոնց մտքեն չանցնիր»⁵⁸:

Այդպէս էր երեկ, այդպէս է այսօր: Մեծ տերութիւնների արտաքին քաղաքականութեան մեջ քիչ բան է փոխվել XIX դ. 70-80-ական թվականներին ի վեր, թեև ստացել է ծանր հարվածներ ճշված ժողովուրդների կողմից (չկա դադութատիրութիւնը. նախկին դադութները և կիսագադութները ժողովուրդների միջազգային համակեցութեան՝ ՄԱԿ-ի անդամ-

55 Նույն տեղում, էջ 148:

56 Նույն տեղում, էջ 271:

57 Նույն տեղում, էջ 274:

58 Նույն տեղում, էջ 290:

ներ են իբրև միջազգային իրավունքի սուբյեկտներ): Սակայն ժողովուրդների պայքարը լիակատար անկախութեան համար դեռևս չի ավարտվել ոչ միայն Ասիայում, Աֆրիկայում և Հատինական Ամերիկայում, այլև Եվրոպայում: Դեռևս ամբողջովին չեն լուծվել պատմական դատերը և չեն վերացել պատմական անարդարությունները: Դրա առավել ցայտուն ասպարեզը դարձյալ չլուծված Հայկական Հարցն է, Հայոց ցեղասպանության ճանաչման և դրա դիմաց փոխհատուցման խնդիրը: Համաշխարհային քաղաքականությունը դեռևս կառուցված չէ Համամարդկային արժեքների վրա: Չնայած ժողովրդավարության սկզբունքների հաղթարշավին, դրանք իսպառ բացակայում են մեծ տերությունների հարաբերություններում փոքր ժողովուրդների նկատմամբ:

Այս ամենը վերստին հաստատում է, որ հայ հանճարեղ գրող Հ. Պարոնյանի քաղաքական երգիծանքը այսօր էլ պահպանում է իր արժեքը և նշանակությունը:

АКОП ПАРОНИЯН – КРИТИК ДИПЛОМАТИИ ВЕЛИКИХ ДЕРЖАВ
(К 125-летию интернационализации Армянского вопроса)

АКОП. АКОПЯН

Р е з ю м е

Гениальный сатирик Акоп Паронян беспощадно разоблачил истинный смысл политики великих держав в Восточном вопросе во второй половине 70-х и в начале 80-х годов XIX столетия. Он показал, что эти державы на деле не были заинтересованы в изменении печальной судьбы христианских подданных султана, а лишь спекулировали на этом, чтобы добиться уступок у Турции в свою пользу.

NAKOP PARONYAN AS A CRITIC OF THE POLICY OF THE GREAT POWERS
(To the 125th anniversary of internationalization of the Armenian question)

NAKOP NAKOBYAN

S u m m a r y

Satirist of genius Hakop Paronyan unmasked ruthlessly the real sense of the policy of the Great Powers in the Oriental Question in the second half of the seventies and in the early eighties of the 19th century. He revealed that the Great Powers were not really concerned with the changing of the sad fate of the Christian subjects of the Sultan, and caught it as an excuse in order to exert pressure upon Turkey, and obtain concessions for themselves.